Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Պ-1072-13.05.2025-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
«ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1.

1. «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» 2015 թվականի մարտի 25-ի ՀՕ-16-Ն օրենքը լրացնել նոր՝ 4.1-րդ գլխով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 4.1
ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՕՏԱՐՈՒՄԸ

Հոդված 11.1. Պետական սեփականություն հանդիսացող ռազմական նշանակության արտադրանքի օտարումը

1. Պետական սեփականություն հանդիսացող ռազմական նշանակության արտադրանքը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման համաձայն կարող է օտարվել կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի գործունեության սուբյեկտների ամփոփ ցուցակում ներառված ռազմարդյունաբերական համալիրի սուբյեկտներին ինչպես նաև ռազմական կարիքների համար պետական պատվերի պայմանագրի հիման վրա պետական պատվեր կատարող սուբյեկտներին՝ նոր արտադրատեսակների մշակման կամ արտադրատեսակների արդիականացման կամ նորոգման կամ օգտահանման կամ փորձարկումների իրականացման համար:
   Օտարման կամ անհատույց օգտագործման պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1.

2. ~~1.«~~«Ռազմարդյունաբերական համալիրի մասին» 2015 թվականի մարտի 25-ի ՀՕ-16-Ն օրենքը լրացնել նոր՝ 4.1-րդ գլխով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ԳԼՈՒԽ 4.1

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՕՏԱՐՈՒՄԸ

Հոդված 11.1. Պետական սեփականություն հանդիսացող ռազմական նշանակության արտադրանքի օտարումը

~~1. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման համաձայն պետական~~

2. Պետական սեփականություն հանդիսացող ռազմական նշանակության արտադրանքը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման համաձայն կարող է օտարվել կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի գործունեության սուբյեկտների ամփոփ ցուցակում ներառված ռազմարդյունաբերական համալիրի սուբյեկտներին ինչպես նաև ռազմական կարիքների համար պետական պատվերի պայմանագրի հիման վրա պետական պատվեր կատարող սուբյեկտներին՝ նոր արտադրատեսակների մշակման կամ արտադրատեսակների արդիականացման կամ նորոգման կամ օգտահանման կամ փորձարկումների իրականացման համար:

~~2.Սույն հոդվածի 1-ին մասից բխող պայմանագրերը կնքում է~~Օտարման կամ անհատույց օգտագործման պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ~~սահմանված պետական կառավարման մարմինը~~:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ (*Պ-1072-13.05.2025-ՊԱ-011/1*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	ՀՀ կառավարություն	««Ռազմարդյունաբերական համալիրի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված *(Պ-1072-13.05.2025-ՊԱ-011/1)*	Հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «**Հոդված 11.1. Պետական սեփականություն հանդիսացող ռազմական նշանակության արտադրանքի օտարումը** 1. **Պետական սեփականություն հանդիսացող ռազմական նշանակության արտադրանքը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման համաձայն կարող է օտարվել կամ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի գործունեության սուբյեկտների ամփոփ ցուցակում ներառված**	Ընդունվել է առաջարկվող խմբագրությամբ:	Ընդունվել է

			ռազմարդյունաբերական համալիրի սուբյեկտներին, ինչպես նաև ռազմական կարիքների համար պետական պատվերի պայմանագրի հիման վրա պետական պատվեր կատարող սուբյեկտներին՝ նոր արտադրատեսակների մշակման կամ արտադրատեսակների արդիականացման, կամ նորոգման, կամ օգտահանման, կամ փորձարկումների իրականացման համար: **Օտարման կամ անհատույց օգտագործման պայմանները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:** 2. Սույն հոդվածի 1-ին մասից բխող պայմանագրերը կնքում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված պետական կառավարման մարմինը:»:		
2.	ՀՀ կառավարություն	««Ռազմարդյունաբերական համալիրի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի 1-ին հոդված (Պ-1072-13.05.2025-ՊԱ-011/1)	**Նախագծում հստակեցնել «ռազմական նշանակության արտադրանք» հասկացությունը:**	Հասկացությունը սահմանված է «Զենքի շրջանառության մասին» 2022 թվականի հոկտեմբերի 5-ի ՀՕ-368-Ն օրենքի 1-ին հոդվածում	Մերժվել է